ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԲԱԺԱԿ» ԳԻՆՈՒ ՆՎԻՐԱԲԵՐՄԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Հնագույն ժամանակներից (Ք. ա. III հազարամյակ) Հայաստանի տնտեսական ու հասարակական կենցաղում առանձնակի տեղ է զբաղեցրել գինին[1]: Վերջինիս վերաբերյալ առաջին գրավոր հիշատակությունները պահպանվել են հին ասորական սեպագիր, ապա Վանի թագավորության արքաների (Իշպուինի, Մենուա, Արգիշտի I եւ այլն) թողած ուրարտերեն արձանագրություններում, որտեղ գինին վկայված է՝ կապված այգիների ու ցանքատարածությունների հիմնադրման հետ[2]:

Խմիչքի այս տեսակը, որը քրիստոնյաներն ընդունում են իբրեւ Քրիստոսի արյան խորհրդանիշ, կազմել է Հայ Եկեղեցու ծիսատոնական համակարգի անբաժանելի մասը: Քրիստոնեության խորհրդանշան խաչը քանդակային արվեստում հաճախ պատկերվել է կա՛մ որպես խաղողի որթ, կա՛մ որպես հնձան, որի վրա ճմլվում է ասպվածային խաղողը, իսկ վերջինիս ողկույզների համադրումը նռան պտուղների հետ փոխարինվում էր՝ հիմքում ունենալով երկուսից էլ գինի սպանալու հանգամանքը[3]: Դատահական չէ, որ խաղողի, նռան, գինու կարասների ու կուժերի զարդաքանդակները առանձնահատուկ տեղ են զբաղեցրել հոգեւոր կառույցների ճարտարապետական հորինվածքում (նկ. 1-3): Այս առումով աչքի են ընկնում Տեկորի, Պտղնիի, Ցախաց Քարի, Արատեսի եւ այլ հուշարձանների որմերի քանդակային զարդամոտիվները, ինչպես նաեւ Վանա լճի Աղթամար կղզու Ս. Խաչ (Ժ դար) եկեղեցու «որթագալարի գոտին», ուր խորհրդանշական համադրումներով ներկայացված է այգեգործության մի ամբողջական համակարգ[4] (նկ. 4):

Միջնադարում լայն տարածում գտած կենցաղային պատկերներով տապանաքարերի քանդակները եւս հեռու չեն վերոնշյալ զարդամոտիվներից: Այստեղ առավել հաճախ հանդիպում են գինու մեծ եւ փոքր չափի կանթավոր սափորներ, ջրձիգներ, թասեր, որոնց մեծ մասն առկա է հարսանեկան, որսի ու երկրագործական տեսարաններում[5] (նկ. 5):

---

1 **Ս. Հարությունյան, Ա. Քալանթարյան, Ն. Պետրոսյան, Գ. Սարգսյան, Ն. Մելքոնյան, Ս. Հորոսյան, Պ. Ավետիսյան**, Գինին հայոց ավանդական մշակույթում, Եր., 2005, էջ 19: Այսուհետ՝ «Գինին հայոց ավանդական մշակույթում»: Վերջերս ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը Արենիի քարանձավային համալիրում գտել է շուրջ 6000 տարվա հնության խաղող ճմլելու գարա, թթվեցման կուժեր, գավաթներ, գավեր: Աշխարհի շուրջ 21 լաբորատորիաներում կատարված ուսումնասիրությունները հավաստում են, որ աշխարհում առաջին անգամ մարդը խաղող է մշակել ու դրանից գինի սպացել հենց Հայկական լեռնաշխարհում:

2 Տե՛ս **Ա. Ֆ. Արտյունյան**, Очерки истории виноградарства и виноделия древней и средневековой Армении, Ереван, 2005, էջ 27-43:

3 Տե՛ս **Ն. Լ. Պետրոսյան**, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 347-349:

4 «Գինին հայոց ավանդական մշակույթում», էջ 121-122:

5 Տե՛ս **Ս. Գ. Բարխուդարյան, Գ. Ն. Կարախանյան**, Հայկական գերեզմանական հուշարձանները եւ նրանց

Եկեղեցիների ծիսական արարողակարգում գինու կիրառության մասին է վկայում Զվարթնոցում, Հաղբատում, Դադի վանքում, Մրենում եւ այլ հուշարձաններում հնձանների, գինու մառանների ու բազմաթիվ կարասների առկայությունը:

Գինու օգտագործումը հայոց կենցաղում նախ եւ առաջ պայմանավորված է Հայաստանում բազմաթիվ այգիների հիմնադրման ու խաղողագործության հետ, որոնք զգալի զարգացում են ապրում հատկապես միջնադարում: Վերջինիս վկայություններն են հնագիտական պեղումների ժամանակ ի հայտ եկած արտադրական կառույցներն ու տարաբնույթ գ-

նկ. 1

Այգիները վանքերի հասութաբեր հաստատություններից էին, որ նվիրաբերվում էին ամբողջությամբ կամ մասնակիորեն[6]: Նվիրաբերվում էին ոչ միայն բուն այգիները, այլեւ դրանցից ստացված եկամուտը: Այգիներից կամ հանդամասերից գինու նվիրաբերման վկայություններ են պահպանվել հայկական վիմագրերում: Այս առումով աչքի է ընկնում Նոր Գետիկի վանքի (Գոշավանք) Ս. Աստվածածին եկեղեցու ներքուստ, հարավային պատին կարմրաներկով գրված ՉԾ (1301) թ. արձանագրությունը: Ումեկի թոռ եւ Ճարի որդի Թադարտերը միաբանելով Սուրբ ուիտին գրում է. «...ԷՏՈՒ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱ/ՆՑ ԻՄՈՑ, Ի ՅԻՄ ՀԱՀՆԻ ԳԵՂՆ, Ի ՆԱԽԵԴՈՒՌՆ/ ՅԻՄ ԽԱՍ ԱՅԳՈՒՆ .Ճ. (100) ԿՈՒԺ ԳԻՆԻ, ՂԸՆԾԻ ՄԵԾ ԿԱԺՕ/ՈՎ...»[7]: Փաստորեն, վանքին նվիրվել է Հահնի գյուղի Նախեդուռն կոչված հանդամասի խաս (լավ, ընտիր) այգու գինուց հարյուր կուժ գինի, այն էլ պղնձի մեծ կուժով:

Նմանօրինակ վկայություն է պահպանվել նաեւ Սանահնի վանքի գրատան նա-խագավթի հարավային պատուհանի տակ, ուր Վարդան քահանան հյուրատանը տա-լու նպատակով ՅՂԵ (375) սպիտակով գնում է միչեւ գրատանը պատկանող այգին տա-ռածվող Ատոմի այգին եւ կարգադրում. «...ՎԱՐԴԷՎԱՐԻ ՅԱՅՆ ԳԻՆԷՆ ՏԱՆ Ի ԼԵՐՆՆ...» ու ավելացնում. «ՈՎ ՁԷԳԻՆ ՀԻԻՐԱՏԱ/ՆԷՆ ՀԱՆԷ ԿԱՄ ԳԻՆԻՆ ԽԱՓԱՆԷ, ՅԾԸ ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ՆՁՈՎ/ԱԾ Է: ԹՎԻՆ ՉԻԴ»[8] (1275):

քանդակները. ՊԲՀ, 1954, թ. 4, էջ 200:

6 Տե՛ս **Լ. Մարգսյան**, Հայաստանի նվիրատվական արձանագրությունները (9-14-րդ դարեր), Եր., 2007, էջ 76:

7 «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, կազմեցին՝ Ս. Ա. Ավագյան, Հռ. Մ. Ջանփոլադյան, Եր., 1977, էջ 78, արձ. 156:

8 **Կ. Ղաֆադարյան**, Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները, Եր., 1957, էջ 162, արձ. 128:

Այգի սպանալը, նորը հիմնելն ու գինու հնձան կառուցելը ամրագրված է նաեւ Նորավանքից 1,5 կմ հեռու գտնվող մի խաչքարի արձանագրության մեջ, ուր. «...ԱՌԱՔԵԱԼ ԿՐԱՆԱՒՈՐ[Ս] ԵՒ ԵՂ[ԲԱՅՐՆ] ԻՄ ԽՈՅԱԴԵՂ Ի ՀԱԼ[ԱԼ] ԱՐԴԵԱՆՑ ՍՏ/ԱՅ[ԱՔ] ՁԱՅԳԻՍ ԵՒ ԲԱՁ[ՈՒՄ] ԱՇԽԱՏՈՒԹ[ԵԱՄԲ] ՏՆԿԵՑ/ԱՔ ԵՒ ՁՆԾԱՆՍ ՇԻՆԵՑԵԱՔ ԵՒ ՁԽԱՉՍ ԿԱՆԳՆ/ԵՑԱՔ...»[9]:

նկ. 2

Այս արձանագրությամբ հաստատվում է, որ Նորավանքի շրջակայքը հարուստ է եղել այգիներով ու պտղատու ծառերով, իսկ գինու հնձանի կառուցման փաստը հավաստում է տեղանքում՝ գինեգործության ու խաղողագործության զարգացած լինելը:

Այգիներից ստացված մթերքը մշակելու նպատակով այգեստեղերում կամ վանքերի տարածքում կառուցվում էին հնձաններ[10], որտեղ ստացվող պտղահյութը օգտագործվում էր եկեղեցիներում՝ Ս. Հաղորդության խորհրդի ժամանակ[11]: Այդ պտղահյութը, որը հայտնի է նաեւ անապակ գինի անունով, միջնադարյան սկզբնաղբյուրներում եւ հատկապես վիմական արձանագրություններում կոչվում է «բաժակ» (բաժկի, բաժկացու) գինի եւ օգտագործվում է «Հաղորդության գինի» իմաստով:

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնել Հայաստանում վաղեմի պատ-մություն ունեցող գինու՝ եկեղեցական ծիսակարգում ձեռք բերած դերն ու նշանակու-թյունը, ինչն անմիջականորեն կապվում է «բաժակ» գինու նվիրագործման հետ:

Հր. Աճառյանը «բաժակ» բառեզրը դասում է գավառական բառերի շարքը, որը գործածվում է հաղորդության բաժակ, սկիհ, հաղորդության գինի իմաստներով: Նոր բառեր է համարում բաժկին - «Հաղորդութեան գինին», բաժկաբերանը - «մաքրախօս» (որի բերանը Հաղորդութեան բաժակի պէս սուրբ է) եւ բաժկացուն «Հաղորդութիւն պատրաստելու գինի»[12]:

Բազմաթիվ նվիրատվությունների թվում, վանքերին ու եկեղեցիներին տր-վում էր նաեւ

9 **Ս. Սաղումյան**, Նորահայտ վիմագրեր Նորավանքից. «Հուշարձան», տարեգիրք Բ, Եր., 1993, էջ 92:

10 Հնձանը գետնի մեջ փորած ավազան է, որի մեջ լցնում են խաղողն ու ոտքերով ճմլում, որտեղից քաղցուն խողովակով վազում է հնձանակի մեջ եւ այնտեղից ուղղվում դեպի այս կամ այն կարասը: Տե՛ս **Սպ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հ. երրորդ, էջ 118, նաեւ **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Եր. 1977, էջ 105:

11 Տե՛ս **Լ. Սարգսյան**, անդ, էջ 79:

12 **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 381:

այգիներից ու արտերից ստացված բնամթերք, որում կարեւոր տեղ էր զբաղեցնում նաեւ «բաժակ» գինին, որի նվիրաբերման վկայություններից մի քանիսը պահպանվել են մեր հուշարձանների որմերին փորագրված արձանագրություններ-ում:

Հնարավոր է, որ նվիրաբերվող «բաժակ» գինու անվան տակ նվիրատուն կարող էր իր սեփական այգուց հավաքագրել որոշակի քանակությամբ խաղող[13]: Վերջինս տվյալ վանքի կամ եկեղեցու գինու ստացման ու պահպանության համար նախատեսված շինության ներսում ենթարկվելով համապատասխան վերամշակման, պահվում էր որպես «բաժակ»՝ պատարագների ժամանակ կիրառելու նպատակով: Վերն ասվածի ապացույցն է այն, որ եկեղեցու այգիներից ու բարեպաշտների նվերներից հավաքված խաղողը՝ վանքի միաբան-ների ձեռքով ու աղոթական երգերով եկեղեցու հարակից կառույցներում (հիմնականում՝ հնձաններում. – **Ա. Հ.**) տրորվում ու պահվում էր արարողություններում օգտագործելու համար, որի պահպանությամբ զբաղվում էր ջահընկալը, որ պատարագների ժամանակ դրանով լցնում էր բաժկամանը[14]:

նկ. 3

Այն, որ գինին «բաժակ» բնորոշմամբ հատկացվել է հոգեւոր հաստատություններին, պարզում ենք վիմական արձանագրություններն ուսումնասիրելիս: Վերջինիս նվիրաբերման վկայություններն առկա են որոշ նվիրատվական-շինարարական արձանագրություններում, որոնք կներկայացնենք ըստ ժամանակագրության: Վաղագույն օրինակը Ամբերդի եկեղեցու ՆՀԵ (1026) թվականը կրող շինա-բարական-նվիրատվական վիմագիրն է, որը ներքուստ փորագրված է հյուսիսային մուտքի կիսաբոլորաձեւ քարին, ուր ասվում է, որ իշխան Վահրամը (վիմագրում՝ Վարհամ) կառուցելով եկեղեցին սահմանում է. «...ՊՏՈՒՂ[15] ՆԻԳԻ ՏՈՒՆՆ Բ. ԿԱՊԻՃ/ ՅՐ ՅԱՐԱԳԱԾՈՏՆԷ ՅԷԳԻՆ Բ. ՓԱՍԳԻ[ՆԻ] / Ի ՔԱՂՔՈ ԴԱՇՏԻ ԲԱԲԱԿՆ : Ժ : ԼԻՏՐ ՅԵՐԵՅ/Ն .Ա. ԴՀ ՅԻՐՈՋԷ ԿՆՈՋԷ...»,[16] այնուհետեւ նշվում են եկեղեցական արարողությունների դիմաց տրվող այլ հասույթները եւ անեծքի, հատուցման ձեւակերպումները: Արձանագրությունը խիստ եղծված է, այն կարդացել է Երվանդ Տեր-Մինասյանը Տարագրոսի հանած էստամպաժից: Սույն վիմա-

13 Այս տեսակետը մեզ հուշեց ազգագրագետ, պ. գ. թ. Սուրեն Հոբոսյանը:

14 **Մաղաքիա արք. Օրմանյան**, Ծիսական բառարան, Եր., 1992, էջ 66:

15 Պտուղը (պտղի) հարկատեսակ էր բնամթերքով (ցորեն, գարի, յուղ, պանիր), որ գյուղացիները տալիս էին վանքերին: Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հ. չորրորդ, Եր., 1945, էջ 125:

16 **Ե. Տեր-Մինասյան**, Ամբերդաձորի հնությունները եւ արձանագրությունները. «Էջմիածին», 1961, Ե, էջ 45-56: Տե՛ս նաեւ **Ս. Ա. Ավագյան**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Եր., 1978, էջ 335:

գիրը պարզում է Ամբերդի եպիսկոպոսարանին ենթակա գավառների (Նիգ, Արագածոտն) գյուղատնտեսության հետ կապված որոշ հարցեր: Օրինակ, Նիգ գավառի համար որպես հարկ սահմանվում է ցորենը, Արագածոտնի համար՝ գինին, ինչն էլ բացատրվում է տվյալ գավառում խաղողագործության եւ գինեգործության առավել զարգացած լինելով[17]: Աղվանից Վաչագան թագավորի կանոններից մեկի համաձայն՝ եկեղեցուն տրվող պտղիի (բնամթերքի) հարկաչափը կազմում էր 4 գրիվ[18] ցորեն, 6 գրիվ գարի եւ 16 փաս քաղցու (նորաքամ գինի)[19]:

նկ. 4

Անիի Ս. Փրկիչ (Աբլղարիք Պահլավունու) եկեղեցու ՆՁԵ (1036) թվականը կրող վիմագրում, որը փորագրված է մուտքից դեպի արեւմուտք՝ իններորդ կամարի մեջ, խոսվում է Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի կողմից եկեղեցու սպասավորներին մի շարք հասույթներ շնորհելու մասին, ինչպես նաեւ Աբլղարիք Պահլավունու կողմից. «...ԸՆԾԱԵԱՑ ՅԻՒՐ ՇԻՆԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉՍ/ ԲԱԺԱԿԻ ՎԱՄՆ ՓՐԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅՆ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈ ԻՒ/ՐՈ...»[20], որին հետեւում է նզովքի ձեւակերպումը:

«Բաժակ» գինուն է առնչվում նաեւ Նոր Գետիկի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու ներքուստ, բեմի կիսակլոր պատի վիմագիրը, որում Իգնատը եւ Դասապետ վարդապետը նորոգում են. «...ՋԵԿԵՂԵՑԻՍ�օ ԵՒ ԵԴԱՔ/ ԶՊԱՏՈՒԱՐՍ, ՏՆԿԵՑԱՔ ԱՅԳԻ ԵՒ ՅԵԿԵՂԵՑՈՅՆօ ԺԱՄԱՆՈՅ ԴՐԱՔ ԵՒ Զ :Ա: ՄԱՄՆ ՀՈՅՐ/ԱՏԱՆՆ ՏՎԱՔ:».[21] հետեւում են անեծքի ու հատուցման ձեւակերպումները: Ըստ Մալխասյանցի բացատրական բառա-

17 **Ս. Վ. Հարությունյան**, Անբերդ, Եր., 1978, էջ 55: Տե՛ս նաեւ **Գ. Ս. Թումանյան**, Աշտարակի նորահայտ հնձանները. «Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները)», Եր., 1993, էջ 140-147:

18 «Գրիվ»-ը ընդեղենի (ցորեն, գարի, ալյուր) չափ է, որի մեծությունը շատ տարբեր է զանազան գրվածքների մեջ: Օրինակ, ըստ Ճիրակացու՝ «Չափ ԻԲ քսեստաց լինի գրիւ մի, որ է նոյնչափ մոդոյ» կամ տասներորդ մասն արդուի, 7 $^{1}/_{5}$ քսեստ: Տե՛ս **Ռ. Ն. Վարդանյան**, Հայաստանի չափերն ու կշիռները (V-XV դարեր), Եր., 1989, էջ 189. Նաեւ **Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հ. առաջին, էջ 477:

19 «Կանոնագիրք Հայոց», հ. Բ, աշխատասիրությամբ՝ **Վազգեն Հակոբյանի**, Եր., 1971, էջ 94: Տե՛ս նաեւ «Գինին հայոց ավանդական մշակույթում», էջ 219:

20 ,Դիվան հայ վիմագրության», պրակ I, կազմեց՝ Հ. Ա. Օրբելի, Եր., 1966, էջ 48, արձ. 135: Տե՛ս նաեւ **Ղ. Ալիշան**, Ճիրակ, էջ 84. **Ս. Ա. Ավագյան**, անդ, էջ 333:

21 «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, էջ 69, արձ. 139:

բանի «ժամանոց» է կոչվում այն սրվակը, բաժկամանը, որի մեջ լցնում են պապարագի գինին[22], ուստի «ժամանոց դրաք» ասելով ակնարկվում է պապարագի գինու համար հատուկ ման դնելը, որով «բաժակի» պետք է տրվեր վանքի համար տնկված այգուց սպացված գինուց:

Վայոց ձորի Ն. Ուլգյուր գյուղապետի Ս. Աստվածածին եկեղեցու ՉԾԷ (1308) թվականը կրող վիմագրում, որը փորագրված է հարավային պատին, ներքուստ, ևս փաստվում է «բաժակ» գինու նվիրաբերումը. «ԵՍ ԹԱՄԹԱ ԽԱԹՈՒՆՍ ՏՎԻ ԱԾԱԾՆԻՍ :Լ: (30) ...(փաս) ԲԱԺԱԿ Ի ՄՃՌԱԿԱԾՈՐՈ, ԻՄ ՅԵՏ ԵՒ ԻՄ ՈՐԴԻՔՆ ՏԱՆ ԱՆԽԱՓԱՆ. ՈՎ ՉՏԱ ԻՄ ՄԵՂԱՅՆ ՏԷՐ Է. :ՉԾԷ:»[23]:

նկ. 5

Աշտարակի Կարմրավոր եկեղեցու պարսպի հարավային մուտքի բարավորի ՉՀԴ (1325) թվականը կրող շինարարական-նվիրատվական վիմագրում ևս եկեղեցուն տրվում է այգի, որից օգտվողը պետք է «բաժակ» տա: Ասնավորը և Ղուտալչաքը միա-բանելով Ս. Աստվածածնին և կառուցելով «...զպարիսպս, զշրջայմաղն և զդուրն...»՝ տալիս են. «... ՏԱՐԵՆՆ Ժ (10) ՓԱՍԳԻ (կամ Ի (20) փասգի), Ի ԹԱՄԻՐԱՅ ԱՅԳՈՅՆ: ՈՎ ՈՐ ՁԱՅԳԻՆ ՈՒՏԷ, ԲԱԺԱԿ ՏԱ...»[24]:

Էջմիածնի Ս. Հռիփսիմե եկեղեցու զանգակատան հարավային սյան արևմտահայաց կողմի ՌՃՂԷ (1728) թվականը կրող նվիրատվական վիմագրում եկեղեցուն է տրվում մեկ լիտր մոմ, նաև մեկ կարաս բաժկացու, որը ձևակերպված է այսպես.

22 **Սպ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հ. երկրորդ, Եր., 1944, էջ 138:

23 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Եր., 1967, էջ 35, արձ. 85: Տե՛ս նաև **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 167. **Ս. Ա. Ավագյան**, անդ, էջ 332:

24 **Ս. Ա. Ավագյան**, անդ, էջ 335-336: Տե՛ս նաև **Ղ. Ալիշան**, Այրարատ, էջ 187. **Ս. Սաղումյան**, Աշտարակ (պատմական անցքեր, հուշարձաններ, վիմագիր արձանագրություններ), Եր., 1998, էջ 169:



նկ. 6

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԳԱՍՊԱ
ՐԻ ՈՐԴԻ ԲԱԲԷԼՍ ԵՏՈՒ ՍԲ
ՈՒԽՏԻՍ ՏԱՐԷՆ Ա ԿԱՐԱՍ
ԲԱԺԿԱՅՈՒ Ա ԼԻՏՐ ՄՈՄ ՈՐ
ԴՈՅ ՈՐԴԽԻՕ ՈՐ Ե ՆԱՒԱԿԱՏԵՍԱՕՅ
ԺԱՄՆ ՁՄԵՋ ՅԻՇԵՆ ՌՃՂ (1728) (նկ. 6)

«Բաժակ» գինին տրվում է նույն եկեղեցու անավարտ մնացած մեկ այլ վիմա-գրում՝ փոքագրված հարավային պատի ձախ խորշի ձախ մասում, որ հետևյալն է.

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՁՈՐԱԳԵՂՅԻ ՍԻ
ՄՈՆՍ ԵՒ ԻՄ ԹՌՈՆՔ ԵՂԻԱՋԱՐ
ԵՒ ՎԱՐԴԱՆ ՏՈՒԱՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ՏԱ
ՐԷՆՆ ՄԷԿ ԿԱՐԱՍ ԲԱԺԿԻ ԵՒ ՄԷԿ ԼԻ
ՏՐ ՄՈՄ ՈՐԴՈՅ ՈՐԴԻ ՈՐ ... (նկ. 7)

Վերջին երկու արձանագրությունները գրառվել են վերջերս, որոնք քննարկել ենք

«լիտր» կշռաչափի վերաբերյալ կապարած մեր ուսումնասիրության մեջ[25]: Այս արձանագրություններից պարզ է դառնում, որ «բաժակ» գինին կիրառվել եւ նվիրաբերվել է եկեղեցիներին անգամ ուշ միջնադարում:

Նշված արձանագրություններից մի քանիսում նկատելի են փաս, փասգի (փաս գինի) բառեզրերի կիրառություններ, որոնք ուսումնասիրել է բանասեր եւ վիմագրագետ Սուրեն Ավագյանը: Ըստ նրա՝ փասն իբրեւ հեղուկաչափի միավոր հայագիտությանը հայտնի է դեռեւս դասական մատենագրությունից, մասնավորապես՝ Մովսես Կաղանկատվա-



նկ. 7

ցու «Աղվանից պատմութիւն»[26] եւ Անանիա Շիրակացու «Յաղագս հարցման եւ լուծման»[27] երկերից, որոնցում, սակայն, բառիս ստուգաբանությունը եւ նրա արտահայտած հեղուկաչափը չի որոշվում: Հարցի լուծման համար Ավագյանը բերում է Եսայի Նչեցու «Մեկնութիւն մարգարէին Եզեկիէլի» աշխատության այն հատվածը, ուր Ս. Գրքի տարբեր չափակշռային միավորներն արտահայտվում են հայկական միջավայրում կիրառվող տեղական համապատասխանություններով: Ըստ Նչեցու՝ 1 փասը հավասար է 10 քսեստրի եւ, քանի որ քսեստրի մոտավոր կշիռը կազմում է 532 գրամ (կամ 534, 544, 589, 652), ուստի փաս, փասգիի կշիռը կլինի 0,532 X 10 = 5,32 կիլոգրամ[28]:

Ռ. Վարդանյանը հետեւելով Շիրակացու չափակշռային հաշվումներին, գինու չափման

25 **Ա. Է. Հարությունյան**, Նորահայտ արձանագրություններ «լիտր» կշռաչափի վերաբերյալ, տրված է տպագրության «ՀԱԲԻՏՈՒՄ», թ. 1:

26 **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912:

27 «Շիրակացու մատենագրությունը», Եր., 1944:

28 Տես **Ս. Ա. Ավագյան**, անդ, էջ 337-338:

մեծությունը բերում է ըստ Նիկոմիդիայում կիրառված քսեստի, որը հավա-սար է 20 ունկիի: Ըստ համապատասխան հաշվումների 1 ունկիին կազմում է 26,7 գրամ (ըստ Հ. Մանանդյանի 27,2 գրամ[29]), որն էլ բազմապատկելով կստանանք 0,534 գրամ[30]: Քանի որ գինու չափման միավոր հանդիսացող փասը հավասար էր 10 քսեստի, հետևաբար կունենանք 0,534 X 10 = 5,34 կիլոգրամ 1 փասի համար:

Ելնելով վերոնշյալից, փասի, փասգիի վիմագրական հիշատակություններն ըստ սահմանված համապատասխանության կլինեն այսպես: Վահրամ Պահլավունու հրամանագրով Արագածոտնի եպիսկոպոսական աթոռին յուրաքանչյուր այգուց իբրև պտղի է հատկացվելու Բ (2) փասգի = մոտ 10-11 լիտր գինի, Թամթա խաթունն Աստ-վածածին եկեղեցու հաղորդության համար Մճռկաձոր գյուղում գտնվող իր այգու բերքից Լ (30) փաս = 159 -160 լիտր գինի է հատկացնում, Աշտարակի Կարմրավոր եկեղեցուն նվիրել են Թամիրի (այժմ՝ Ոսկեվազ) այգու բերքից Ժ (10) կամ Ի (20) փաս = 53 կամ 106 լիտր գինի, որպես «բաժակ»՝ հաղորդության գինի օգտագործելու նպատակով[31], իսկ Աղվանից թագավորի կանոնում սահմանված պտղիի 16 փաս քաղցուն իբրև հարկաչափ կկազմի 85-86 լիտր նորաքամ գինի:

Էջմիածնի Ս. Հռիփսիմե եկեղեցու նշված արձանագրություններում «բաժակ» գինին նվիրաբերվում է կարասով (մեկ կարաս բաժկացու, մեկ կարաս բաժկի), իսկ Շիրակացու մի խնդրում կարդում ենք, որ մի կարասի մեջ եղել է 126 փաս գինի[32]: 126 փասգին վերածելով վերոնշյալ հաշվումներին (126 X 5,32)՝ մոտավորապես 670 լիտր գինի կունենանք յուրաքանչյուր կարասում:

Այսպիսով, վիմական արձանագրությունների միջոցով լուսաբանվում է հայ ավանդական մշակույթի խորհրդանիշը հանդիսացող գինու՝ եկեղեցական ծիսակարգում ունեցած դերն ու նշանակությունը, ինչի ցայտուն օրինակն են «բաժակ» գինին ու նրա նվիրաբերման վկայությունները:

29 **Հակոբ Մանանդյան**, Կշիռները եւ չափերը հնագույն հայ աղբյուրներում, Եր., 1930, էջ 29-30:
30 **Ռ. Հ. Վարդանյան**, Հայաստանի չափերն ու կշիռները (V-XV դարեր), Եր., 1989, էջ 137, 180:
31 Անդ, էջ 338:
32 **Սպ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հ. չորրորդ, էջ 489: